

կու փայտակերտ սիւներու վրայ, որոնք հսկայ մամեր կը ներկայացընեն:

(Հիւսիսային սիւն)	(հարաւային սիւն)
“Բոլոր խաչկալս”	“Յիշման բարւոյն
“Է յիշատակ”	“Տեսան Յօճաննուլ”
“Տեսան Յակոբայ”	“Հաճի Գրիգոր”
“որ է պիտակ”	“Եղբօրն որդւոյն
“Ի թռւին ՌՄԾ”	“Յուհիսի ժՁ”
(= 1761)	(= Յուհիսի 16)

Նալեան Յակոբ պատրիարք շինել տուած է այդ թանկագին խաչկալը, իր վարդապետին՝ Կոլտի. եղբօրորդի հաճի Գրիգորի յիշատակը շատ որոշ չէ: Անշուշտ ոտանաւոր յիշատակարանս ալ իր՝ Նալեանի՝ գրչէն ելած է:

1763. — Հայր Մաշտոց քահանայաթաղ.

“Յիշատակ է Հայր Մաշտոցս քահանայաթաղ գերձակ Մնացականի դստերացն եւ որդւոցն. այսինքն Սրբունհին, տիրացու Ստեփանին, Թագունհին, եւ Իսկունհին. որք ետուն ի վայելուք սուրբ Լուսաւորիչ Եկեղեցւոյ յիշատակ իւրեանց հոգւոյն եւ իւրեանց ննջեցելոցն հոգւոյն. այսինքն՝ Յարութիւն Հանգուցեալ Աստուածաբան վարդապետին. գերձակ Մնացականին, տիրացու Արեւին եւ սկերիչ Գրիգորին: . . .

Նաեւ զպատճառ եւ զյորդորոշն սորին զՏէր Ստեփան Յովնաննսեան:

“Ուրմպիթ երկերիւրեակ” = 4 × 200 =	800
“Ութն յորեւեան ընդ երկտաս(ն)եակ” = 8 × 50 = 400	
+ 12 =	412
“Եթէ առցի միահամակ”	—
“Հայոց թվոյն լինի քանակ” =	1212
	551
	<hr/> 1763

1781. — Արծաթ-ոսկեգօծ, բարձրաքանգակ սկիհի մը յիշատակարանը.

“Յիշատակ է Սկիհս բարեպաշտօն եւ կոշի խաւացէնց մահտեսի Արկարին Կեսարիոյ Դալաս գիւղն. Սուրբ Լուսաւորչայ Եկեղեցուն. ՌՄԼ. ր”